16745

361
Q-58

1912

Հայուհեաց Ուղղափառաց Ընկերութեան վարչութիւնը խնդարհաբար խնդրում է Ընկերութեան մեծ. անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովի, որ նշանակուած է 1912 թ. մարտի 29-ին, հինգշաբթի օրը, ժամը 11½-ին Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան արհեստանոցում, Պասկևիչ փողոց № 13։

2010

7134
361 [Ա.Հ.Ը] Հ-32
N 255
Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
G.C.P.A Publicnaya Biblioteka
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
361 [Ա.Հ.Ը] Հ-32

ՀԱՅՈՒՀԵԱՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1911 թ.

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ընկերութեան հասցէն՝ Вознесенская, 26.

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրատպարան Օր. Ն. Աղանեանի, պօլից., 7.
1912

30

2002

370
Զ105-ՀԱ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան ընդհանուր ժողովի, կայացած մարտի 27-ին 1911 թի։

Վարչութեան նախագահուհի օր. Ս. Բայսողոլեան ներկայ գտնուող անդամուհիների թիւը համարելով օրինական, բացեց ժողովը ժամի 1½-ին, առաջարկելով ընտրել ընդ. ժողովի նախագահ և քարտուղար. միաձայն ընտրուեցին նախագահ. տիկ. Ե. Յարութիւնեան և քարտուղար օր. Ս. Գալաչեան։

Նախագահուհին առաջարկեց ժողովականներին յարգել վարչութեան հանգուցեալ անդամուհի կոյս Իսկուհի Էնֆիաճեանի յիշատակը, ոտքի կանգնելով, որից յետոյ անցաւ օրակարգի հարցերին։

1004/1536գ

Վարչութեան քարտուղար տիկ. Ս. Խոջամիրեանը կարդաց 1910 թի արձանագրութիւնը, ուր շօշափւում էր վարձով գիշերօթիկներ պահելու հարցը, որով և զբաղուելու համար ընտրուած էր մասնաժողով։

Մասնաժողովի քարտուղար օր. Ս. Գալաչեանը կարդաց մասնաժողովի զեկուցումը, որի առթիւ տեղի ունեցան հետևեալ առաջարկութիւնները.

Տիկ. Միրզոյեան. առաջարկում եմ սահմանափակել մասնաժողովի զեկուցման այն կէտը, որտեղ գիշերօթիկից պահանջւում է բացի ծննդեան վկայականից, նաև կողմնակի բժիշկների վկայական, առարկելով, որ կարելի է բաւականանալ միայն որբանոցի բժշկի վկայութեամբ։

Օր. Բայսողոլեան—մենք չըպէտք է բաւականանանք միայն որբանոցի բժշկի վկայականով. գիշերօթիկներին պէտք է ենթարկել նաև օտար բժշկի քննութեան։

Տ. Օրբելի. այդ անհրաժեշտ է աւելի մեծ զգուշութեան համար։

Տ. Միրզոյեան. ես գտնում եմ այդ բանը աւելորդ, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ յաճախ օտար բժիշկների վկայութիւնը զուրկ է լինում ճշմարտութիւնից։

Տ. Յովհաննիսեան. առաջարկում եմ ընդհատել առաջարկութիւնները։

Օր. Նալբանդեան. մասնաժողովին համարում եմ լիազօր իր գործունէութեան և որոշումների մէջ։

Նախագահ. եթէ մի չ'մշակուած հարցի առթիւ ընդ. ժողովը ընտրում է մասնաժողով, վերջինիս որոշումը հաստատում է հետևեալ ընդ. ժողովը իր փոփոխութիւններով։

Պ. Սուրէնեան. մեր որբանոցը լինելով հասարակական մի հիմարկութիւն, որպէս կրթարան, պէտք է կրթի ոչ միայն որբերին և կիսաորբերին, այլ և այնպիսի երեխաների. որոնք ծնողներ ունենալով հանդերձ, զուրկ են կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից, ուստի որբանոցը պէտք է ընդ առաջ գնայ այդ պահանջին և ընդունի իր մէջ նոյն իսկ հարուստ երեխաների։ Ես հակառակ եմ այն մտքին, իբր թէ հարուստները կարող են վատ ազդեցութիւն ունենալ որբերի վրայ. իմ կարծիքով դաստիարակի աչալուրջ հսկողութեան ներքոյ հարուստ և աղքատ երեխաները չեն զգալ դասակարգային խտրութիւն։ Ես կրկնում եմ, որ մեր որբանոցի բարոյական պարտականութիւնը պէտք լինի պահել ամեն տեսակ գիշերօթիկներ առանց խտրութեան։

Տ. Վ. Զմշկեան—Քալանթարեան. Ինձանից անկախ պատճառներով չ'կարողացայ ներկայ գտնուել մասնաժողովի նիստերին, որտեղ ես ևս ընտրուած էի անդամ, սակայն համաձայն եմ նրա մշակած բոլոր կէտերի հետ, եթէ միայն գիշերօթիկները պահուեն մեր որբերի պայմաններում. գալով պ. Սուրէնեանի առաջարկութեան այն կէտին, որ որբանոցում ընդունենք նաև հարուստ երեխաների, ես հակառակ եմ դրան, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ես երկար տարիների ընթացքում գործելով մանուկների շրջանում, ուսումնասիրել եմ նրանց հոգեբանութիւնը, ուստի և վստահանում եմ պնդել, որ նոյն իսկ լաւ դաստիարակի հսկողութեան ներքոյ մանուկների ուշադրութիւնը ամենքից առաջ կենդրոնանում է արտաքինի և այլ այդպիսի աչքի ընկնող երևոյթների վրայ։

Օր. Ս. Բայսօղլեան. Ձեր ընդգծած կէտը կայ մասնաժողովի մշակած կանոններում։

Նախագահուհին հարցը պարզուած համարելով դրեց քւէարկութեան մասնաժողովի որոշումները, որոնք ընդունուեցին միաձայն։

Այնուհետև վարչութեան քարտուղար տիկ. Ս. Խօջամիրեանը կարդաց Ընկերութեան 1910 թ.ի գործունէութիւնը, իսկ գանձապահուհի տիկ. Ս. Պետրոսեանը կարդաց նոյն տարւայ ելքն ու մուտքը և նախահաշիւը, որը ընդ. ժողովը հաստատեց առանց փոփոխութիւնների։

Սրանից յետոյ նախագահուհին անցաւ որբանոցի համար սեփական տուն ձեռք բերելու հարցին. առաջ բերելով այն հանգամանքը, որ որբանոցին համապատասխանող բնակարան վարձել չի յաջողւում, քանի որ այդպիսին դժւարանում են տալ մատչելի գներով, ուստի մեծ պահանջ է զգացւում սեփական տուն ունենալու, որի համար և առաջարկում է ընդ. ժողովին ընտրել մասնաժողով, որը վարչութեան հետ միացեալ ոյժերով աշխատէր իրագործել այդ մտադրութիւնը, միջոցներ մշակելով։

Պ. Մ. Պետրոսեան ի նկատի ունենալով ընկերութեան կանխիկ գումարի փոքր լինելը, առաջարկում է որոշել հարցը սկզբունքով, տուն գնե՞լ թէ ոչ։ Գոնէ իմ կարծիքով աւելի նպատակայարմար կ'լինէր՝ եթէ ընտրելիք մասնաժողովը դիմումների միջոցաւ իրագործէր այդ ծրագրած միտքը և հաւանական է, որ դիմումները չեն մնալ անհետևանք ու այդպիսով կ'ստեղծվի հնարաւորութիւն որբանոցի համար սեփական տուն ձեռք բերելու։

Նախագահուհի. աւելի լաւ է չ'սահմանափակել մասնաժողովի գործունէութիւնը, սակայն և ձեր խորհուրդները կարող են ուղեցոյց լինել մասնաժողովին։

Պ. Մ. Պետրոսեան. այդ դէպքում ցանկալի կ'լինէր մասնաժողովին տալ արտօնութիւն հրաւիրելու աւելի ձեռնհաս մարդկանց։

Պ. Մ. Միրիմանեան. պնդեց նոյնը։

Որոշուեց ընտրել հինգ հոգուց բաղկացած մասնաժողով, կողմնակի ձեռնհաս մարդկանց հրաւիրելու պայմանով և ձայնի իրաւունքով։

Ընտրուեցին.

Պ. պ. Մ. Պետրոսեան
Սուրէնեան
Դալթեան
Սուլխանեան
տ. Վ. Միլեան

Օր. Հ. Նալբանդեան. առաջարկում եմ ընդ. ժողովին կարծիք

յայտնել թէ ո՞րտեղ ունենալ տուն, քաղաքի կենտրոնո՞ւմ, թէ հեռուները։

Նախագահուհի. Թողնենք ամեն ինչ մասնաժողովին։ Ձեր առաջարկութիւնը դարձեալ սահմանափակում է նրա գործունէութիւնը։

Այնուհետև ժողովը անցաւ ընտրութիւններին։ Հերթով դուրս գնացող վարչութեան 6 անդամուհիներին, այն է օր. Ս. Բայսողոլեանին իշ. Ա. Արղութեանին, Տ. Ս. Պետրոսեանին, Տ. Վ. Օրբէլուն, Տ. Կ. Դաւթեան և օր. Ա. Փուղինեանին ընդհ. ժողովը խնդրեց միաձայն կրկին ստանձնել իրանց պաշտօնը, և միայն հանգուցեալ կոյս Իսկուհի Էնֆիաճեանի փոխարէն ընտրել անդամուհի սակայն տ. Կ. Դաւթեանը հրաժարուեց. այնպէս, որ ընտրուեցին 2 նոր վարչութեան անդամուհիներ և 3 փոխանդամուհիներ։ Վերասուգիչ յանձնաժողովի անդամներին և փոխանդամներին նոյնպէս խնդրեց ընդ. ժողովը շարունակել իրանց պաշտօնը. նրանք յարգեցին ընդ. ժողովի խնդիրը։

Ընտրուեցին.

Վարչութեան անդամուհիներ

1. s. Եղիսաբէթ Առաքելեան
2. s. Ս. Շարբաբչեան

Փոխ.-Անդամուհիներ

1. s. Ն. Գէորգեան
2. s. Գասպարեան
3. s. Գ. Խունունց

Նախագահուհին յայտնելով, որ Ապրիլի 12-ին կայանալու է զբօսանք որբանոցի օգտին ու կարևոր են բոլոր անդամուհիների աջակցութիւնը տոմսեր վաճառելով և իրեր նուիրելով, փակեց ընդհ. ժողովը ժամը 3½-ին։

Նախագահ ընդհանուր ժողովի՝ ԵՐ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Քարտուղար՝ Ս. ԳԱԼԱԶԵԱՆ

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ 1911 ԹԻՒՆ

Օր. Բայսողոլեան Սուսաննա—Նախագահ.
Օր. Փուղինեան Աննա—փոխ-Նախագահ.
Իշ. Արղութեան Աննա
Տիկ. Ալիբէգեան Նունէ
Տիկ. Առաքելեան Եղիսաբէթ
Տիկ. Օրբէլի Վարվառէ
Տիկ. Պետրոսեան Սաթենիկ—գանձապահ
Տիկ. Շարբաբչեան Սրբուհի
Տիկ. Խօջամիրեան Սաթենիկ—քարտուղար

Փոխ անդամներ

Տիկ. Գասպարեան Նատալիա
Տիկ. Գէորգեան Սօֆիա
Տիկ. Խունունց Գայիանէ

Վերասուգիչ յանձնաժողովի անդամներ

Տիկ. Միլեան Վարվառէ
Տիկ. Կաֆեան Մարիամ
Օր. Նալբանդեան Հայկանուշ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1911 ԹԻՒՆ

1911 թւի մարտի 27-ն ընդ. ժողովում վարչութեան ընտրութիւնից յետոյ, վարչութեան առաջի ժողովում նախագահ ընտրուեց օր. Ս. Բայսողոլեան, փոխ-նախագահ՝ օր. Ա. Փուղինեան, գանձապահ տիկ. Ս. Պետրոսեան և քարտուղար տիկ. Ս. Խոջամիրեան։

Տարւայ սկզբից վարչութիւնս զբաղուեց որբերի թիւը աւելացնելու հարցով, ուստի և շրջելով խնդրատու որբերի բնակարանները, ընտրեց նրանց միջից ամենաչքաւորներին, որոնցից վիճակով ընդունուեցին երկուսը՝ Արտեմիս Սևուկեան (որբ) և Սեդրակ Աւետիսեան (կիսաորբ)։ Առաջինը ընդունուեց կանդիտատ որբ Աղաբաբեանի փոխարէն, որին վարչութիւնս երեք, չորս ամիս ապարդիւն սպասելուց յետոյ, որոշեց ընդունել վերը յիշած առաջին որբին. բացի այդ սեպտեմբեր ամսում նորից վիճակով ընդունուեցին երեք որբ. Արաքսի Մելքումեան, Եւա Յովհաննիսեան և Գրիգոր Բեբուրեան։

Որբանոցից իր բարեկամների համաձայնութեամբ դուրս գնաց որբ Մարգարիտ Ամուրուգեան քաղաքային դպրոցը վերջացնելուց յետոյ։ Որբերից մի քանիսը, որոնք սովորում էին վճարով ծխական դպրոցներում, վարչութեանս յաջողուեց տեղաւորել քաղաքային դպրոցների համապատասխան դասարաններում թոշակից ազատելու նպատակով։ 1911 թւին որբանոցում խնամուել են 24 երկսեռ երեխաներ. դրանք բոլորն էլ յաճախել են քաղաքային և այլ ուսումնարանները բացի 3 փոքրերից, որոնք ընդունուել են որբանոց տարւայ կիսին։

Սեպտեմբերից երկու որբի ձրիաբար ընդունեց իր արհեստանոցում տիկ. Վիրմիշեանը, որտեղ Պ. Լևոն Բոյեաջեանը սովորեցնում էր կօշկակարութիւն. բացի այդ վերոյիշեալ պարոնը սիրալիր կերպով յանձն առաւ նոյնը շարունակելու թէ Որբանոցում և թէ իր տանը ազատ ժամերին։ Մարտ ամսում նախկին կառավարչուհի տիկ. Տէր-Սարգսեանի փոխարէն վարչութեանս հրաւէրով կառավարչուհու պաշտօն ստանձնեց Տ. Սոֆիա Մանդինեան, իսկ ուսուցչի պաշտօն՝ Պ. Վլադիմիր Ցարութիւնեան։ Վարչութիւնս աւելորդ համարեց հրաւիրել նաև դայեակի, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ երեխաներից մի քանիսը փոքր ի շատէ մեծացած լինելով՝ կարող կ՚լինին մասամբ փոխարինել նրան։

Ինչ վերաբերում է որբանոցի համար սեփական տուն ունենալու հարցին, որ արծարծուել էր նախընթաց ընդ. ժողովում և որի համար ընտրուել մասնաժողով տարւայ ընթացքում, կարիք չ՚զգացուեց դիմել նրանց օգնութեան։ Վարչութիւնս չ՚նայելով իր անվերջ որոնումներին, չգտաւ տուն՝ որոշ չափով համապատասխանող ընկերութեանս միջոցներին՝ ուստի և բարւոք համարեց յետաձգել այդ հարցով աւելի բարեպատեհ ժամանակի։

1911 թւի ընթացքում ընկերութեանս օգտին վարչութիւնս կազմակերպել է մի զբօսանք ապրիլ ամսում և մի ներկայացում, որից ստացուել է զուտ արդիւնք 1261 ր. 93 կոպ.։ Նուէրներ ստացել է կոյս Խոջամիրեանի միջոցաւ ի յիշատակ հանգուցեալ Վարդապետեանի—103 ր., տիկ. Վառվառէ Գուլազեանից ի յիշատակ իր ամուսնու 100 ր., քաղաքային ինքնավարութիւնից, քաղաքային վարկի ընկերութիւնից և ժողովարանի Աւագների խորհուրդից 100-ական ռուբ., Տիկ. Մարգարիտ Աբեանից իր դստեր յիշատակին 50 ռուբ., Պ. Մնացական Խունունցից 50 ր., Տիկ. Իւղաբեր Մ. Թայիրեանից ի յիշատակ հանգ. Եղիսաբէթ Յ. Թայիրեանի 30 ռուբ., Տիկ. Թայիրեանից յիշատակ իր ամուսին Ալեքսանդր Մ. Թայիրեանի 30 ր., Պ. Խաչատրեանի ընտանիքից հանգ. Ալեքսանդր Խաչատրեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն 25 ր., Տիկ. Ս. Շարբաբչեանից իր ամուսնու դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն 25 ռուբ. Պ. Եփրեմ և Վարսենիկ Պողոսեաններից իրանց որդու յիշատակին 25 ր. Միրաքեանի առևտրական տան անդամներից և նրա թոռնիկ Կրասիլնիկեանից Միրաքեանի դագաղի վրայ պսակ դնելու փոխարէն 30 ռուբ., Պ. Սարգիս և Սողոմոն Ցարութիւնեաններից ի յիշատակ իրանց հանգուցեալ եղբօր 20 ռուբ. և այլ անձերից 189 ր.։

1911 թւին ընկերութեանս ընդհանուր մուտքը եղել է 4446 ր. 44 կոպ. իսկ ծախսը 3704 ր. 89 կոպ. ընդհանուր մուտքից մնացել է 746 ր. 34 կ., որը աւելացել է Ընկերութեան գումարին։ Նախահաշուից

ուրեմն աւելի է ծախսուել 124 ր. որովհետև վարչութեան որոշմամբ մի որբ աւելի է ընդունուել։

Զրիաբար բժշկել են որբերին ատամնաբոյժ Օր. Սոֆիա Ստեփանեան. Բժիշկներ պ. պ. Գէորգբէգեան, Շահվերդեան, Խոջափարուխեան, Մխիթարեան և Սունդուկեան։

Ընկերութեանս անդամուհիների թիւը աւելացնելու մէջ, նաև զբօսանքի, ներկայացման և այլ գործերում աշխատել են օգտակար գտնուել ընկ. անդամուհիք Տիկնայք Ա. Աթաբէգեան, Մ. Կաֆեան, Եւգ. Պապովեան, Շ. Էյրանեան, Շ. Մխիթարեան, Ն. Գասպարեան, Մ. Շահազիզեան, Վ. Յովհաննիսեան, Շ. Տէր-Յակոբեան, Տ. Մ. Նարինեան. օրիորդներ՝ Ն. Բալանթարեան, Վ. Լալայեան, Վ. Սայեաթնեան և ուրիշները։

Վարչութիւնս իր բարոյական պարտքն է համարում անկեղծ շնորհակալութիւն յայտնելու այն բոլոր անձանց, որոնք թէ նիւթապէս և թէ բարոյապէս նպաստել են ընկերութեանս բարգաւաճման գործին։ Վարչութիւնս շնորհաւորական ուղերձներ է մատուցել Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան 30 ամեայ գործունէութեան և Պ. Շիրվանզադէի 30 ամեայ գրական գործունէութեան յօբելեանական հանդէսների առթիւ։

Տարեայ ընթացքում տեղի են ունեցել 34 վարչական հերթական նիստ, երեքշաբթի օրերը. ուրբաթ օրերը ժամը 1-ից 3-ը ներկայ են գտնուել մասնաւոր գործերով անդամուհիներ և կողմնակի անձինք։

Երեխաներին զուարճութիւն պատճառելու նպատակով կազմակերպել են թեթև էքսկուրսիաներ, տուել են մի քանի ներկայացումներ, իսկ տարեայ վերջում Ծննդեան տօներին սարքել են տօնածառ։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Վճարով որբեր և կիսաորբեր ընդունելու Անդրկովկասի Հայուհեաց որբախնամ ընկերութեան որբանոցում, որը մշակուած է մասնաժողովում և հաստատութիւն գտած 1911 թուի 27-ին մարտի ընդ. ժողովի կողմից։

1. Որբանոցում կարող են ընդունուել վճարովի որբեր, որոնք ապահովութիւն ունին։

2. Կիսաորբեր՝ եթէ հայրը կամ մայրը այրի է կամ թէ ազգականը ստիպուած է տեղաւորել որևէ տեղ, որպէս զի ազատ լինելով կարողանայ աշխատել նրանց պահելու համար։

3. Կամ եթէ բարերարներից մէկը կամ որևէ հասարակութիւններից ցանկանայ տեղաւորել որբանոցում։

Ա. վճարովի գիշերօթիկ երեխաները բոլոր հանգամանքներում պէտք է խնամուեն միանգամայն միատեսակ որբանոցի երեխաների հետ առանց բացառութեան, բայց սովորել կարող են նաև միջնակարգ դպրոցներում։

Բ. Որբանոց ընդունելիս երեխաներից պահանջւում է ծննդեան և բժշկական վկայականներ։

Գ. Գիշերօթիկի վճարն որոշած է ինքը վարչութիւնը. այդ վճարը անպայման աւելի պէտք է լինի որբանոցում ընկերութեան միջոցներով խնամուած որբի ծախսից. իսկ եթէ այն գիշերօթիկ երեխաներից, որոնց համար բարերարներից կամ հաստատութիւններից, որևէ մէկը վճարում է Վարչութիւնը անհրաժեշտութեան դէպքերում կարող է անել բացառութիւն վերցնելով նրանցից աւելի քիչ՝ քան ծախսուած է որբանոցի երեխաներից մէկի համար։

Դ. Վճարը պէտք պահանջել մի ամիս առաջ, իսկ եթէ հնարաւոր է նոյն իսկ մի քանի ամսանը միանուագ։

Ե. Նախնական ծախսերի՝ մահճակալի, անկողնի և այլ իրերի համար կարելի է ստանալ փողով կամ նոյն այդ անհրաժեշտ իրերով։

Զ. Երեխաներին ամառուայ ընթացքում թոյլ տալ մի ամիս գնալու ծնողաց մօտ թէ ոչ, որոշում է ինքը վարչութիւնը։

Է. Նաև անպայման պարտաւոր է վճարով երեխաների մասին տեղեկութիւն հաւաքել, թէ իրօք նրանք կարող են գիշերօթիկի համար ներմուծել վճարը ընկերութեան կանոնաւոր կերպով։

Ը. Բացի այդ վարչութիւնը պէտք է պահանջի 3 անձնաւորութեան սորագրութիւն և հասցէներ, որոնց կարելի կլինի վերադարձնել երեխային, վճարը անկանոն ստանալու դէպքում։ Անհրաժեշտ է նաև, որ նրանցից գոնէ մէկը ծանօթ լինի վարչութեան անդամուհիներից մէկի հետ, այլապէս պէտք է պահանջել նօտարի հաստատութիւնը, այդ անձերից երեքից մէկի համար։

ՈՐԲԵՐԻ ԱՆԻԱՆԱՑՈՒՑԱԿԸ

1911 թիի

Որբերի անուններն եւ ազգանունները	I Ե՞րբ են ծնուել	II Ո՞րտեղացի են	III Ե՞րբ են ընդունուել	IV Ո՞րբ է թէ կիսաորբ	V Ո՞րտեղ են սովորում
1 Աղախանեան Աւետիք	1901 թ 11 մայիսի	Զանգեզուրցի	1907 թ. մայիսին	Որբ	Քաղաքային դպրոցում
2 Աղախանեան Համբարձ.	1898 թ. 7 մարտի	Զանգեզուրցի	1907 թ. մայիսին	Որբ	Քաղաքային դպրոցում
3 Դովլաթեան Վաղինակ	1900 թ. 1 մարտի	Նոր-Բայազէտցի	1908 թ. մարտին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
4 Լեոնեան Շաւարշ	1901 թ. 25 սեպ.	Պարսկաստանցի	1907 թ. յունիսին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
5 Խաչատրեան Շողակաթ	1899 թ. 7 սեպ.	Թիֆլիզեցի	1907 թ. մայիսին	Որբ	Ջիգրաշէնի դպրոցում
6 Աւետիսեան Արշալոյս	1897 թ. 8 փետր.	Շուշեցի	1907 թ. մայիսին	Որբ	Գայիանեան դպրոցում
7 Կոլոտեան Համասփիւռ	1898 թ. 8 յուն.	Սարիղամիշցի	1907 թ. յուլիսին	Կիսաորբ	Արհեստաւորաց դպրոցում
8 Ղարագեօզեան Կարապետ	1897 թ. 8 յուն.	Ախալցխացի	1907 թ. յունուարին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
9 Միրիգոզեան Աստղիկ	1898 թ. 8 սեպ.	Թիֆլիզեցի	1908 թ. յունուարին	Որբ	Յովնանեան դպրոցում
10 Մովսիսեան Արփենիկ	1902 թ. 14 յուն.	Վանեցի	1908 թ. յունուարին	Կիսաորբ	Գայիանեան դպրոցում
11 Յարութիւնեան Աստղիկ	1898 թ.	Ալեքսանդրապոլցի	1907 թ. մայիսին	Որբ	Քաղաքային դպրոցում
12 Բաբայեան Գրիգոր	1900 թ. 13 օգոս.	Թիֆլիզեցի	1908 թ. յունուարին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
13 Սարգսեան Մամիկոն	1899 թ. 20 մայ.	Ախալցխացի	1907 թ. մայիսին	Որբ	Քաղաքային դպրոցում
14 Փիլիպոսեան Աբգար	1899 թ. 20 մայ.	Թիֆլիզեցի	1907 թ. մայիսին	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
15 Գրիգորեան Աստղիկ	1901 թ. 4 յունիս	Ախալցխացի	1909 թ.	Հայրը թեկնածու է իսկ մայրը տկար	Քաղաքային դպրոցում
16 Սուլթանեան Անահիտ	1903 թ. 6 սեպ.	Թիֆլիզեցի	1909 թ.	Կիսաորբ	Քաղաքային դպրոցում
17 Նալբանդեան Սաթենիկ	1902 թ. 3 մարտի	Թիֆլիզեցի	1909 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
18 Շամախեան Գենովափէ	1897 թ. 1 սեպ.	Շուշեցի	1909 թ.	Կիսաորբ	
19 Սեակեան Արտեմիս	1901 թ. 24 օգոս.	Թիֆլիզեցի	1909 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
20 Աւետիսեան Սեդրակ	1905 թ. 15 օգոս.	Թիֆլիզեցի	1911 թ.	Կիսաորբ	
21 Մելքոյեան Ս. Օվաննա	1900 թ. 19 յուն.	Թիֆլիզեցի	1911 թ.	Որբ	Քաղաքային դպրոցում
22 Օհանեան Եւա	1902 թ. 25 փետ.	Կօղա գիւղից	1911 թ.	Որբ	
23 Բեբուրեան Գէորգ	1904 թ. 2 նոյեմ.	Թիֆլիզեցի	1911 թ.	Որբ	
24 Բաղչիեան Թամարա (վճար)	1897 թ. 7 ապրիլ	Թիֆլիզեցի	1910 թ. սեպտեմբ.	Որբ	3 իգական գիմնազիայում

ՄՈՒՏՔ

Ընկերութեան

1911 թուի յունուարից

ՄՈՒՏՔ	Իսկական				Նախահաշիւ 1911 թ.
Իսկական անդամուհիներից	1176				
Օժանդակող անդամներից	94				
Մշտական անդամ Մինաս Սուլխանեանից	200				
Իշ. Մ. Արզութեան Երկայնաբաղուկից	12				
1910 թուի անդամավճարը ստացած					
1910 թուի ապառիկ անդամավճարներից	38		1520		1400
Իշ. Մ. Թումանեանից գիշերօթիկ Սեուկեանի համար.	70				
Որբ. գիշերօթիկ Բախչինեանից	156				
Մի ամառայ վճար Տէր-Յարգսեանից	15		241		276
%. 200 ռուբ. Օբլիկացիաներից	10				
% Ընթացիկ հաշուի գումարից	92				
% Բանկային արժեթղթերից	324	58	426	58	416
Միանուագ նուիրատուութիւններից			996	50	800
Ներկայացումից և Զբօսանքից			1262	36	1000
Ընդամենը			4446	44	3892

Ծանօթ. Ընկերութիւնը ստանալու է անդամավճարներ 1911 թուին մի քանի անդամուհիներից ապառիկներ 74 ռ.։

ՄԻՋՈՑՆԵՐԸ

1912 թուի յունուարի 1-ը

ԵԼՔ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Publicznaya Biblioteka
7/XI 1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

1004
15369

ԾԱԽՍ	Իսկական				Նախահ. 1911 թ.
ռոճիկ կառավարչուհուն և ուսուցչին			367	50	360
աշխատողներին			249	40	330
բնակարանի վարձ, ջուր և վերանորոգում			391	55	350
լուսաւորութիւն և վառելիք			250	65	200
դեղորայք			36	41	100
դասական պիտոյքների և ուսման վարձ			100	96	100
տպագրական և գիւանական			83	85	60
հագուստեղէնի	529	60			
իրեղէնի	59	35	588	95	350
մանր ծախս			143	95	150
անակնկալ					180
մթերքներ: հաց	455	36			
միս	253	65			
կաթ	116	35			
շաքար, թէյ, սուրճ	143	99			
պանիր, բրինձ, իւղ, կորկոտ, մրգեղէն	275	85			
առօրեայ ծախսերի	246	47	1492	67	1400
ընդամէնը			3704	89	3580
աւելացած ընկերութեան դրամագլխին			741	55	312
ընդամէնը			4446	44	3892

Ընկերութեան միջոցները

1911 թվի յունվարի 1-ից — 1912 թվի յունվարի 1-ը

ՄՈՒՏՔ	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.	Կոպ.
1911 թվի տարեայ ընթացք. ստացած է			4446	44
1910 թվից մնացել է առ ձեռն դրամ				
Գանձապահի մոտ	621	10		
Ընթացիկ հաշվում	2882	9		
Տոկոսաբեր արժեթղթերով	6000		9503	19
Ընդամենը			13,749	63

Ծանօթ. Ընկերութիւնը ունի 200 ր. օբլիգացիա Եղբ. Ծովիանեանների և Ընկ. առևտրական տանը։

ԵԼՔ	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.	Կոպ.
1911 թվի տար. ընթացքում ծախսած է			3704	89
1911 թվից անցնում է 1912 թվիը				
գանձապահի մոտ առձեռն	870	42		
Ընթացիկ հաշվում	2174	32		
Տոկոսաբեր արժեթղթերով	7000		10044	74
Ընդամենը			13,749	63

Ընկերութեան

1912

ՄՈՒՏՔ	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.
Իսկական անդամուհիներից	1280		
Նուիրատուութիւններ	700		
Ա. Ի. Մանթաշեանի նուիրած	2000		
Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնից	100		
% Տոկոսաբեր արժեթղթերից	415	50	
% ընթացիկ հաշուի գումարից	108	50	
Զբօսանքից և ներկայացումից	1140		
Գիշերօթիկ որբ Բաղչեանից	156		
Ընդասենը	5900		

Նախահաշիւ

թուի

ԵԼՔ	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.
Ռոճիկ կառավարչուհուն և ուսուցչին	380		
Աշխատողներին	250		
Բնակարանին և ջրի	465		
Դեղորայքի	50		
Դասական պիտոյքների և ուսման վճար	100		
Լուսաւորութիւն և վառելիք	250		
Մանր ծախս	145		
Դիւանական և տպագրական	70		
Հագուստեղէնի և իրեղէնի	590		
Մթերքների	1500		
Անակնկալ ծախքեր	100		3900
Դրամագլխին աւելացած			2000
Ընդամենը			5900

СРЕДСТВА ОБЩЕСТВА

отъ 1-го января 1911 года — *по 1-ое января 1912 года*

ПРИХОДЪ	Дѣйствительный				Смѣта на 1911-ый годъ.
Отъ дѣйствительныхъ членовъ .	1176				
Отъ постояннаго чл. Минаса Сулханянца . . .	200				
— членовъ соревнователей .	94				
Отъ Кн. М. Аргутинской Долгор. за 1910-ый годъ . .	12				
Отъ нѣсколькихъ членовъ долгъ за 1910 годъ . . .	38		1520		1400
Отъ Кн. М. Тумановой за пансіонъ Севакянъ . .	70				
За пансіонъ Ст. Теръ-Саркисова .	15				
За пансіонъ сироты Т. Бахчіевой.	156		241		276
% съ Облигаціи на 200 рублей .	10				
% съ суммы, находящ. на текущемъ сч. . . .	92				
% съ билетовъ на вкладъ . .	324	58	426	58	416
Единовременныя пожертвованія .			996	50	800
Отъ спектакля и гулянія . .			1262	36	1000
Всего			**4446**	**44**	**3892**

Примѣч. Общество имѣетъ получить отъ нѣкоторыхъ членовъ взносы за 1911-ый годъ 74 руб.

РАСХОДЪ	Дѣйствительный				Смѣта на 1911-ый годъ.
Жалованья надзирательн. и учителю			367	50	360
— служащимъ . .			249	40	330
Квартира, вода и ремонтъ . .			391	55	350
Освѣщеніе и отопленіе . .			250	65	200
Лѣкарство			36	41	100
Учебныя пособія и за правоученіе			100	96	100
Типографскія и канцелярскія прин.			83	85	60
Окопировка	529	60			
Обзаведеніе	59	35	588	95	350
Мелкій расходъ. . . .			143	95	150
Непредвиденный . . .			„		180
Продовольствіе					
Хлѣбъ	455	36			
Мясо.	253	65			
Молоко	116	35			
Сахаръ, чай, кофе . .	143	99			
Сыръ, крупа, овощи, фрукты масло и др. . .	275	85			
Ежедневный расходъ . ,	246	47	1492	67	1400
Итого			3704	89	3580
Прибавился къ капиталу .			741	55	312
Всего			**4446**	**44**	**3892**

СРЕДСТВА

*отъ 1-о января **1911** года*

ПРИХОДЪ	Рубли	Коп.	Рубли	Коп.
Въ теченіи 1911-го года получено			4446	44
(Остатокъ съ 1910-года)				
У казначея	621	10		
На текущемъ счету	2882	9		
Билеты на вкладъ	6000		9503	19
Всего			13,949	63

Примѣчаніе. Общ-во имѣетъ облигацію на 200 руб. Торговаго дома бр. Цовіановыхъ и К°.

ОБЩЕСТВА

*по 1-ое января **1912** года*

РАСХОДЪ	Рубли	Коп.	Рубли	Коп.
Израсходовано за 1911-ый годъ			3704	89
Переносится на 1912-ый годъ				
У казначея . . . . . ,	1070	42		
На текущемъ счету	2174	32		
Билеты на вкладъ	7000		10244	74
Всего			13,949	63

Смѣта Общества на 1912-ый годъ

ПРИХОДЪ	Рубли	Коп.	Рубли
Взносы членовъ	1280		
Пожертвованія	700		
Пожертвован. наслѣд. А. И. Манташева	2000		
Отъ Тифлисск. Город. Управл. . .	100		
% съ билетовъ на вкладъ . . .	415	50	
% съ суммъ наход. на текущемъ сч. .	108	50	
Съ гулянія и спектакля . . .	1140		
За пансіонъ сироты Бахчіевой . .	156		
Всего	5900		

РАСХОДЪ	Рубли	Коп.	Рубли
Жалованья надзирательницѣ и учителю	380		
— служащимъ . . .	250		
За квартиру и воду	465		
Лѣкарство	50		
Учебн. пособія и за правоученіе. .	100		
Отопленіе и освѣщеніе . . .	250		
Мелкій расходъ	145		
Канцеляр. и типографскій. . .	70		
Окопировка и обзаведеніе . . .	590		
Продовольствіе	1500		
Непредвиденный	100		3900
Прибавка къ капиталу . . .			2000
Всего			5900

Կոյս Խօջա-Մինասեանի միջոցաւ ի յիշատակ հանգուցեալ Վարդապետեանի	103
Տիկ. Վարվառէ Գուլազեանից ի յիշատակ իր ամուսնու Երեմիա Գուլազեանի	100
Քաղաքային ինքնավարութիւնից	100
Քաղաքային վարկի ընկերութիւնից	100
Ժողովարանի աւագների խորհրդից	100
Տիկ. Մարգարիտ Աբեանից իր դստեր քառասունքի առթիւ	50
Պ. Մնացական Խունունցից	50
Տիկ. Թայիրեանից ի յիշատակ իր ամուսնու հանգուցեալ Ակ. Ն. Թայիրեանի	30
Տիկ. Իւղ. Մ. Թայիրեանից ի յիշատակ հանգուցեալ Եղիսաբէթ Թայիրեանի	30
Օր. Ս. Բայսօղլեանի հանգանակած	44
Պ. Ա. Խաչատրեանից ի յիշատակ Ալեքսանդր Խաչատրեանի	25
Տ. Ս. Շարբաբչեանից իր ամուսնու յիշատակին	25
Պ. Եփրեմ և տ. Վարսենիկ Պողոսեաններից իրանց որդու յիշատակին	25
Պ. Միրաքեանի տան անդամներից իրանց հօր Յ. Միրաքեանի դագաղի պսակի փոխարէն	20
Պ. Սարգիս և Սողոմոն Յարութիւնեաններից ի յիշատակ իրանց եղբօր	20
Պ. Արշակ Յակոբջանեանի հանգանակած	20
Պ. Գրիգոր Կուզանեանից (զինեվաճառ)	15
Տիկ. Անտոնեանից	13
Հանգուցեալ Յ. Միրաքեանի Թոռնիկ Սուրէն Կրասիլնիկեանից ի յիշատակ իր պապի	10
Կոյս Եր. Բիրուչեանից ի յիշատակ հանգուցեալ կոյս Իսկուհի Էնֆիաճեանի	10
Եղբայր Պողոսեանների առևտրական տնից	10
Տ. Ս. Մխիթարեանի միջոցաւ	10
Տ. Մ. Ասլամազեանից հանգուցեալ Ա. Մ. Խուդադեանի դագաղի պսակի փոխարէն	10

Նուիրած իրերի վաճառքից	9	50
Տիկ. Մարիամ Աղբաշեանից	8	
Տ. Վարվառէ Օրբելիի միջոցաւ խանութներից	5	50
✠ Տ. Լիւսիա Եարգուլեանից	4	
200 բուբլու Օբլիգացիայից	5	
Տիկ. Մարիամ Բէժանբէկից իր դուստր Հեղինէի յիշատակին	6	50
Տ. Ս. Սմբատեանից	3	
Տ. Դարիա Սիմոնովայից	3	
Տ. Նատալիա Ռուբինեանից	3	
Լիւսիա և Ժորժիկ Խոսրովեաններից	3	
Օր. Վ. Միրիմանեանից	5	
Տիկ. Կատարինէ Քաթանեանից տօների առթիւ	5	
Կոյս Երմոնիա Բերուչեանից տօների առթիւ	3	
Տիկ. Եղիսաբէթ Առաքելեանից	2	
Տ. Ն. Ալիբէգեանից	2	
Օր. Ա. Փուղինեանից	2	
Տ. Ս. Պետրոսեանից	2	
Մի քանի երեխաներից	2	
Իշ. Ա. Արղութեանից	1	
Տ. Վ. Մելիք-Ստեփանեանից	1	
Տ. Կ. Մալեանից	1	

ԻՐԵՐՈՎ ՆԻՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

տ. Աբեանից իւղ, մրգեղէն, կոնֆետ և այլն պաշարեղէն
Կեսի և Գրիգոր Զանազեաններից 15 ֆունտ կոնֆետ
Աղբաշեանից քաղցրեղէն
Զանազան անձնաւորութիւններից կուլիչներ և այլ քաղցրեղէններ
տիկ. իշ. Եղիսաբէթ Թումանեանից վերարկու և բաւականաչափ հագուստներ
օր. Փուղինեանից գրքեր և հագուստներ
օր. Օզեանդրից մի արկղ խմորեղէն
տիկ. Խօջամիրեանից հագուստներ
տիկ. Մալեանից հագուստներ և ուտելեղէն
տիկ. Քալանթարեանից զանազան հագուստներ
տիկ. Կ. Լիսիցեանից հագուստներ
տիկ. Ս. Խոսրովեանից հագուստներ
տիկ. Ն. Տէրեանից խաղալիքներ
տիկ. Ն. Ալիբէկեանից հագուստներ
տիկ. Կոստանեանից հագուստներ
տիկ. Դ. Սիմոնովից զանազան հագուստներ
պ. Դավլաթեանից 20 ֆունտ ձուկ
Մարիամ Տիգրանեանից մահճակալ և այլ իրեր
Տ. Մ. Տուլաեվայից ներքնակ, վերմակ և բուրդ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
ԱՄԱՍԻԱ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԵՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Մայրապետ Աբամելիքեան Յեփրոսինէ
✠ Կոյս Էնֆիաճեան Իսկուհի
օր. Արշալոյսեան Շամունէ
պ. Մելիք-Ազարեան Ալէքսանդր
պ. Սուլխանեան Մինաս

Իսկական անդամներ 12 ռուբ. աւելի վճարող

տ. Գէորգեան Սոֆիա Մին. 25
տ. Քալանթարեան Սաթենիկ 20
տ. Գուլազեան Վարդուհի 20

Տարեկան 12 ռուբ. վճարողներ

իշ. Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ
տ. Աբեան Մարգարիտ
տ. Աթաբէկեան Անանա
տ. Աւետիսեան Ոսկի
տ. Առաքելեան Սոֆիա
օր. Առաքելեան Անանա
տ. Աքրիկեան Եղիսաբէթ
տ. Ալիբէկեան Նունէ
օր. Բայսոզոլեան Սուսաննա
տ. Բարինագ Լիւբով
տ. Բախչեան Եղիսաբէթ
տ. Բէժանբէգ Սոֆիա
տ. Բոզարջեան Սոֆիա
տ. Թումանեան Եղիսաբէթ
օր. Խոսրովեան Նինա
տ. Կաֆեան Սաթենիկ
տ. Կաֆեան Նունէ
տ. Կաֆեան Տիրուհի
տ. Կաֆեան Մարիամ
տ. Միլեան Վարվառէ
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրաքեան Նունէ
տ. Մելիքեան Սոֆիա
տ. Մխիթարեան Սուսաննա
տ. Միրաքեան Մարիամ
տ. Յարութիւնեան Մարիամ
տ. Շահվերդեան Եփեմիա
տ. Պսարևա Նինա
տ. Պետրոսեան Սաթենիկ
տ. Պետրոսեան Թագուհի
✠ տ. Ռոմինեան Նատալիա
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Տէր-Աբրահամեան Եղիսաբ.
տ. Տէրեան Նատալիա
տ. Քալանթարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Քագարեան Մարիամ

Տարեկան 10 ռուբ. վճարողներ

տ. Ամբարդանեան Թամար
տ. Գիւլբէնդեան Զարուհի
տ. Զարգարեան Նունէ
տ. Խունունց Գայիանէ
տ. Կարգանեան Աննա
տ. Մալեան Աննա
տ. Մալեան Կատարինէ
տ. Շահլամեան Նատալիա
տ. Սէլեան Հեղինէ
տ. Վարդանեան Աննա
օր. Փուղինեան Աննա
տ. Ղարաջեան Մարիամ

Տարեկան 6 ռուբ. վճարողներ

իշ. Արղութեան Աննա
տ. Առաքելեան Եղիսաբէթ
օր. Աբէլեան Մարիամ
տ. Ամիրաղեան Զարուհի
տ. Ալիխանեան Վարվառէ
տ. Ապրէսեան Անահիտ
տ. Աղամալեան Գիւլիզար
տ. Աւետիսեան Հերսելիա
տ. Ալմօյեան Տիրուհի
տ. Աղբալեան Մարիամ
տ. Բաղրեան Օլգա
տ. Գասպարեան Նատալիա
տ. Գէորգեան Նունէ
տ. Գէորգեան Աննա
տ. Գուլև Աննա
տ. Դանդուրեան Վարսենիկ
տ. Դանիելեան Սօֆիա
✠ տ Եարգուլեան Լիւսեա
տ. Զօրեան Եղիսաբէթ
իշ. Թումանեան Աննա
տ. Խոջամիրեան Սաթենիկ
տ. Խոսրովեան Սօֆիա
տ. Կոստանեան Հեղինէ
տ. Կրէթեան Օվսաննա
տ. Ղամբարեան Սիրանոյշ
տ. Ղամբարեան Նունէ
տ. Մարտիրոսեան Հայկանուշ
տ. Մաղաթեան Նատալիա
Տէր. Մատինեան Վարվառէ
տ. Միլեան Մարիամ
օր. Մելիք-Հայկազեան Եղիսաբէթ
օր. Հախվերդեան Մանիա
տ. Յովհաննիսեան Դարիա
տ. Նահապետեան Եւա
տ. Շահլամեան Մարիամ
տ. Շարբաբչեան Սրբուհի
տ. Զաթալբաշեան Սօֆիա
տ. Սարգսեան Նւարդ
տ. Սէյլանեան Վարդուհի
տ. Սէյլանեան Տիրուհի
տ. Վարդանեան Հռիփսիմէ
տ. Տէր-Անտոնեան Շուշանիկ
տ. Տէր-Խաչատրեան Ղումաշ
տ. Տէր-Յովհաննիսեան Եղիսաբէթ
տ. Փարսադանեան
տ. Փիթոյեան Նադեժդա
տ. Քալանթարեան Վարդուհի
տ. Օրբէլի Վարվառէ
տ. Օքօյեան Սաթենիկ
տ. Իւղբաշեան Սօֆիա

Տարեկան 5 ռուբ. վճարողներ

տ. Բահադրեան Մարթա
мад. Гадахабадзе Варвара

տ. Գէորգեան Սօֆիա Պետ.
տ. Դանդուրեան Եփեմիա
օր. Դօլուխանեան Եւգենիա
տ. Դօլուխանեան Եւգենիա
տ. Դիւանեան Կատարինէ
տ. Եղիազարեան Եղիսաբէթ
տ. Խրխրեան Սօֆիա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Հասան Զալալեան Աստղիկ
տ. Զիթողցեան Աննա
տ. Մատինեան Հայկանուշ
օր. Հախվերդեան Աննա
տ. Յովհաննիսեան Վարդուհի
տ. Շահպարոնեան Ռոզալիա
տ. Պապովեան Եւգենիա
Տիր. Սահակեան Վարդուհի
տ. Փարսադանեան Սօֆիա
օր. Քանդարեան Շուշանիկ
օր. Օրբէլի Ուսուտաննա

Տարեկան 4 ռուբ. վճարողներ

† Կոյս Իսկուհի Էնֆիաճեան
« Խարազեան Շուշանիկ
« Բերուշեան Երմոնիա
տ. Տէր-Յակոբեան Սօֆիա
տ. Մկրտչեան Զարուհի

Տարեկան 3 ռուբ. վճարողներ

իշ. Արղութեան Կատարինէ
տ. Աբովեան Սիրանոյշ
տ. Ալխազեան Նինա
տ. Ամիրեան Կատարինէ
տ. Բաշբէուկ Մելիքեան Աննա
օր. Բուղդանեան Նինա
իշ. Բէհբութեան Կատարինէ
Տիր. Բագրատունի Աննա
տ. Բախչեան Եղիսաբէթ Պետ.
օր. Գալաչեան Սօֆիա
տ. Գրիգորեան Զարի
Կոյս Գուլուլեան Կատարինէ
տ. Գրիգորեան Աստղիկ
տ. Գուլուլեան Նատալիա
տ. Դանդուրեան Աննա
տ. Դաւթեան Գայիանէ
տ. Դաւթեան Հայկանդուխտ
տ. Եղիգարեան Օլգա
օր. Եղիազարեան Մարիամ
տ. Զուրաբեան Սօֆիա
Տիր. Զարթեղեան Աննա
տ. Էյրանեան Շուշանիկ
իշ. Թումանեան Մարիամ
տ. Թամազեան Եւա
տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցեան Մարիամ
օր. Լալայեան Վարվառէ
տ. Լոմիձէ Սիդոնիա
տ. Խատիսեան Մարիամ
տ. Խոջայեան Բալասան
տ. Խոջամիրեան Գենովբէ
տ. Ծուրինեան Մարգարիտ
տ. Ղազազչեան Մարիամ
տ. Ղոնեան Հռիփսիմէ
տ. Ճշմարիտեան Սաթենիկ
տ. Ճերմակեան Սրբուհի
տ. Մանանդեան Վարվառէ
տ. Մելիք-Շահնազարեան
տ. Միրզոյեան Հեղինէ
օր. Մուրադեան Կատարինէ
տ. Մսրեան Եղիսաբէթ
տ. Յարութիւնեան Երանուհի
տ. Նալբանդեան Մարիամ
օր. Նալբանդեան Հայկանուշ

տ. Շահազիզեան Մարիամ
տ. Զայգէշտեան Թամար
տ. Ռոտինեան Սօֆիա
տ. Ռօստոմեան Սալոմէ
տ. Սիմոնովա Դարիա
օր. Սուրգոնեան Նունէ
օր. Սուլխանեան Աստղիկ
տ. Սահակեան Թերեզա
օր. Ստեփանեան Սօֆիա
տ. Սաֆարեան Օլգա
տ. Սաղոյեան Տիրուհի
օր. Սայեաթնեան Վարվառէ
տ. Սունդուկեան Եւա
տ. Սմբատեան Սրբուհի
Տիր. Տարիելեան Շուշանիկ
տ. Տէր-Գրիգորեան Օվսաննա
տ. Տէր-Միրաքեան Շուշանիկ
տ. Տէր-Յովսէփեան Եղիսաբէթ
տ. Տասալեան Օլգա
տ. Տէր-Յարութիւնեան Լուսիկ
տ. Տէր-Յակոբեան Շուշանիկ
տ. Տէր-Աբրահամեան Արփենիկ
տ. Փուղինեան Նունէ
օր. Քալանթարեան Նատալիա
տ. Քաթանեան Կատարինէ
տ. Քալանթարեան Թամար
տ. Իւանեան Նունէ

Օժանդակող անդամներ

պ. Էնֆիաճեան Արտաշէս	20	ր.
պ. Էլի-Միրզեան Լևոն	15	ր.
պ. Կաֆեան Գաբրիէլ	12	ր.
պ. Սուրէնեան Ալեքսանդր	10	ր.
պ. Ռոտինեան Գաբրիէլ	6	ր.
պ. Փուղինեան Գրիգոր	5	ր.
պ. Մամիկոնեան Ալեքսանդր	5	ր.
պ. Խոսրովեան Պողոս	3	ր.
պ. Գէորգեան Նիկողայոս	3	ր.
պ. Մելիք-Հայկազեան	3	ր.
բժ. Քալանթարեան Լևոն	3	ր.
պ. Մովսէսեան Գրիգոր	3	ր.
պ. Կաճկաճեան Արտաշէս	3	ր.
պ. Մատէոսեան Մամբրէ	3	ր.
Տէր-Յովհաննէս Ամիրխանեան	3	ր.

Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը

Հայուհեաց որբախնամ ընկերութեան վերաստուգիչ յանձնաժողովը քննելով ընկերութեան 1911 թվի հաշիւները և փաստաթղթերը, գտաւ կանոնաւոր և ճիշտ։

Անդամուհիներ
Վ. Միլեան
Մ. Կաֆեան
Հ. Նալբանդեան

«Ազգային գրադարան»
NL0050104